2/26.5/6149

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԵՆԻԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«29» 04 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0084-21

Ձեռնարկողը՝ ***«ԿԱՄԱՐ 006» ՍՊԸ***
գ Դավթաշեն, փ. 6 փ. 8

Գործունեությունը՝ Ակունքի փուֆերի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0084-21
<29> 04 2021թ.

Արագածոտնի մարզի Ակունքի տուֆերի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ԿԱՄԱՐ 006» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Կարմրաշեն համայնք

Ներածական մաս. «ԿԱՄԱՐ 006» ՍՊ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվում է Արագածոտնի մարզի Ակունքի տուֆերի հանքավայրի արդյունահանման աշխատանքներ, որի նախագիծը մշակվել է Ընկերության տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ Արագածոտնի մարզի Ակունքի տուֆերի հանքավայրի արդյունահանումը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս. Ակունքի հրաբխային տուֆերի հանքավայրը գտնվում է Արագածոտնի մարզի Կարմրաշեն համայնքի վարչական սահմանում, գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում /արոտավայրեր/ և զբաղեցնում է 10.89հա մակերես: Մոտակա բնակավայրերն են՝ Ակունք, Շղարշիկ, Կարմրաշեն, Եղնիկ գյուղերը (որոնք հանքավայրից ընկած են 1.2-2.5 կմ հեռավորությունների վրա) և Թալին քաղաքը (4 կմ), որոնց հետ տեղամասը կապված է գրունտային և ասֆալտապատ ճանապարհներով: Ընկերության կողմից հայցվող տարածքում բացակայում են՝ ծառային բուսականությունը, ինժեներական ենթակառուցվածքները և այլ հողօգտագործողները: Լեռնագրական տեսակետից տարածքը բնութագրվում է խիստ քարքարոտ բլրաալիքավոր ռելիեֆով, կտրտված ու սեզոնային ռեժիմ ունեցող հեղեղատներով և եզրավորվում է հետախուզման սահմաններով: Հանքավայրի տարածքը գտնվում է 1840-1870մ բացարձակ բարձրությունների վրա:

Ընկերության կողմից հայցվող տարածքի սահմաններում օգտակար հաստվածքը ծածկող մակաբացման ապարները բացակայում են: Սողանքային երևույթներ հանքավայրից հայցվող տարածքում չեն արձանագրվել, բացակայում են մակերևութային ջրային հոսքերը: Հայցվող տարածքը բնութագրվում է հետևյալ կոորդինատներով.

1. 8408959.7, 4476879.2
2. 8408908.6, 4476932.9
3. 8408853.3, 4476902.8
4. 8408801.6, 4476838.8
6. 8408584.7, 4476702.7
7. 8408401.2, 4476432.9
8. 8408571.7, 4476377.5
9. 8408889.7, 4476803.9

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

5. 8408709.5, 4476885.3 10. 8408959.7, 4476879.2:

Կաքավաձորի տուֆերի հանքավայրի Կարմիրսարի տեղամասի հաշվեկշռային պաշարները հաստատվել է 1991 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ, դեկտեմբերի 30-ի թիվ 348 արձանագրությամբ հետևյալ քանակներով՝

A – 1499.0հազ.մ^3, B – 3256.0հազ.մ^3, C_1 – 5287.0հազ.մ^3, A +B+C_1 – 10042.0հազ.մ^3:

Հաստատված տուֆերի պաշարները թույլատրելի են օգտագործելու ուղիղ կտրվածքի պատքարի (ԳՈՍ 4001-84) և շինարարական քարի (ՀՍ 100-95) արդյունահանման համար, իսկ արդյունքում առաջացող թափոնները՝ շինարարական, դեկորատիվ խճի ու ավազի արտադրության համար: Ընկերության կողմից նախատեսվում է արդյունահանել ուղիղ կտրվածքի քար, տարեկան 19550մ^3 (արդյունահանվող պաշար) տուֆի զանգվածի հանույթով /21038 մ^3 տուֆի մարվող պաշար/: Շահագործման ժամկետը հաշվարկվել է 50 տարի:

Պաշարները հաստատված են ուղիղ կտրվածքի քարի արդյունահանման համար, իսկ թափոններն որպես խճի և ավազի հումք: Կոպտատաշ քարերի փորձնական հանույթի արդյունքը հաստատված է՝ կոպտատաշ քարի ելքը զանգվածից կազմում է 36%, իսկ մեքենայական կտրված քարինը՝ 39-40% /ԳՈՍ 4001-84/:

Ակունքի տուֆերի հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները թույլ են տալիս հանքավայրի շահագործումը կատարել բաց եղանակով, կիրառելով մեքենայացված հանույթ՝ առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման: Արդյունահանման աշխատանքները կիրառվելուս են CMP-026 քարհատ մեքենաների օգտագործմամբ՝ 0.42մ բարձրությամբ աստիճաններով:

Նախագծված բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով.

- Բացահանքի առավելագույն երկարություն – 680մ,
- Բացահանքի առավելագույն լայնություն – 200մ մ;
- Բացահանքի առավելագույն խորություն (ամենաբարձր և ամենացածր նիշերի միջև եղած տարբերությունը) – 14.5մ;
- Բացահանքի օտարման մակերես – 10.89հա;
- Տուֆերի հաշվեկշռային պաշարների քանակ – 1051.9հազ.մ^3;
- Տուֆերի կորզվող պաշարներ – 977 550մ^3;
- Մակաբացման ապարների ծավալը – 0մ^3:

Հանքարդյունահանման աշխատանքները ամբողջ հզորությամբ կազմակերպելու համար անհրաժեշտ է հանքավայրի բացումը կատարել 1881.0մ բարձրության նիշից, իրականացնելով հետևյալ լեռնակապիտալ աշխատանքները.

- բացահանքի արևելյան մասից անցնող գրունտային ճանապարհի 1846.0մ բարձրության կետից դեպի նշված հորիզոն՝ 627մ երկարությամբ 6մ լայնությամբ մուտքային ավտոճանապարհի անցումով (280մ^3 աշխատանքների ծավալով),
- 1881.0մ բարձրության հանքաստիճանից տուֆի արդյունահանում (ուղեկցվող հանույթ)՝ 1600մ^3 ծավալով,
- արդյունաբերական հրապարակի ստեղծում -150 մ^3:

Բացող և կտրող խրամների անցման ժամանակ հատված քարերի հեռացումը և բարձումը տրանսպորտային միջոցներ իրականացվելու է ձեռքով՝ փոքր ծավալի պատճառով: Հանույթային աշխատանքները նախատեսվում է կատարել ընդլայնական միակող, ցածրաստիճանային մշակման համակարգով: Հանույթային աշխատանքներն իրականացվում են CMP-026 մակնիշի քարհատ մեքենայի միջոցով: Արդյունահանված ուղիղ կտրվածքի քարերն իրացվում են տեղում:

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
РА ЕРЕВАН ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ ЗАО
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER CJSC
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Բացահանքի լցակույտ առաջացնող ապարները արտադրական թափոններն են՝ ընդհանուր՝ 588377 մ³ և տարեկան 11767.54մ³ ծավալներով:

Արտադրական թափոնները սկզբնական շրջանում պահեստավորվում են բացահանքի սահմաններում, նրա հարավային մասում ձևավորվող ժամանակավոր N1 լցակույտում, այնուհետև հնարավորություն ստեղծվելուց հետո իրականացվելու է ներքին լցակույտաառաջացում: Լցակույտի շեպի թեքման անկյունը կազմում է՝ a= 33-35⁰, մակերես՝ վերին մասում 12600մ², հիմքում՝ 16900մ², իսկ միջին բարձրությունը կազմում է 8.7մ: Ընդունված է լցակույտաառաջացման բուլդոզերային եղանակը:

Շահագործման 11-րդ տարվանից սկսած՝ 1881.0մ, 1878.9մ....1868.4մ, 1866.3մ բարձրության հորիզոնների շահագործման ավարտից հետո կատարվում է ներքին լցակույտաառաջացում: Սկզբում տվյալ հորիզոնի արտադրական թափոնները 6.2մ բարձրությամբ կլցվեն արդեն շահագործված հորիզոնի վրա և կհարթեցվեն: Հետագայում ներքին լցակույտ կտեղափոխվեն ինչպես շահագործման ընթացքում գոյացած արտադրական թափոններն, այնպես էլ N1 լցակույտում տեղադրված արտադրական թափոնները և շահագործման աշխատանքներին զուգահեռ իրականացվում է հարթեցում: Մինչ շահագործման ավարտ ներքին լցակույտեր կտեղափոխվեն 565277մ³ թափոնների ծավալը, իսկ շահագործման ավարտից հետո թափոնների 23100մ³ ծավալը, որը կոգտագործվի վերջնական լեռնատեխնիկական վերականգնման աշխատանքներում:

Բացահանքի ջրամատակարարումը նախատեսված է աշխատողներին խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, լցակույտերը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար: Բացահանքում տեխնիկական և խմելու նպատակներով ջուրը կբերվի ջրատար մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով: Կենցաղային կեղտաջրերը կլցվեն արտադրական հրապարակում տեղադրվող անջրթափանց բետոնյա հոր, որը սահմանված կարգով կդատարկվի:

Հանքավայրի շահագործման ընթացքում ջրային ռեսուրսների աղտոտում չի կանխատեսվում, քանի որ տեղամասի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Հանքավայրի շահագործման ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուրներ են հանդիսանում՝ բացահանքը, տեխնիկական և տրանսպորտային միջոցները, լցակույտերը: Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերն են՝ անօրգանական փոշին, ազոտի և ածխածնի օքսիդները, ածխաջրածինները, պինդ մասնիկները (մուր): ՇՄԱԳ հաշվետվությունում հաշվարկվել են նշված արտանետումների քանակները: Արտանետումների ազդեցությունը գնահատելու համար կատարվել է դրանց ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ /“Էռա”(“Эра”) համակարգչային ծրագրով/: Որպես արտանետման աղբյուր ընդունվել է բացահանքը՝ որպես հարթակային աղբյուր: Համաձայն հաշվարկների արդյունքների՝ արտանետվող նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների առավելագույն արժեքները /հաշվի առնելով նաև ֆոնային ցուցանիշները/, չեն գերազանցում բնակավայրերի համար սահմանված ՍԹԿ-ները:

Բացահանքի լեռնակապիտալ աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակներ, հանքախորշեր, լցակույտեր, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհ) պարբերաբար ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- տեխնիկատրանսպորտային միջոցների աշխատանքի ապահովում ձայնախլացուցիչ սարքավորումներով՝ աղմուկի մակադակի նվազեցման նպատակով,
- տեխնիկա-տրանսորտային միջոցների երթևեկության բացառում ճանապարհներից ու արտադրական հրապարակներից դուրս,
- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա զտիչների տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,
- արտադրական հրապարակում նավթամթերքների պահեստավորում և պահում հատուկ հատկացված տեղում,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում և հանձնում որպես մետաղական թափոն,
- խախտված տարածքների վերականգնում/ռեկուլտիվացիա:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումները իրականացվելու է բացահանքի շահագործման ավարտից հետո: Աշխատանքները ներառում են՝ բացահանքի հատակ տեղափոխված արտադրական թափոնների մնացած՝ 23100մ³ մասի /որն արդեն տեղափոխվել է բացահանքի արդյունահանված տարածք/ տեղափոխում և վերջնական հարթեցում բուլդոզերի օգնությամբ: Ապարները կտեղափոխվեն 1834.8մ բարձրության հորիզոնի 3730մ² մակերեսի վրա, կփռվեն 6.2մ բարձրությամբ և կհարթեցվեն: Հարթեցումը կկատարվի բացահանքի ողջ մակերեսով, ներառյալ՝ արտադրական հրապարակի ավտոճանապարհների մակերեսները, ընդհանուր կազմելով 94550 մ² /կամ 9.45 հա/: Լեռնատեխնիկական վերականգնման տևողությունը կկազմի 21 օր, իսկ աշխատանքների իրականացման ծախսերի խոշորացված նախահաշիվը գնահատվել է 1052.6 հազ.դրամ: Աշխատանքները կատարվելու են էքսկավատոր ավտոինքնաթափ բուլդոզեր համալիրով:

Ընկերության կողմից, արդյունահանմանը զուգընթաց իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, կենսաբանական միջավայրը: Մշտադիտարկումների իրականացման տարեկան ծախսերը կկազմեն 150.0 հազ ՀՀ դրամ:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են նաև միջոցառումներ, ուղղված աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հրդեհային անվտանգությանը, հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում Արագածոտնի մարզի Կարմրաշեն գյուղում անցկացվել են հանրային քննարկումներ /չորս քննարկում/, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Մասնակիցների կողմից կարևորվել է հանքավայրի շահագործման աշխատանքներում Կարմրաշեն գյուղից աշխատատեղերի ստեղծումը և Ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և արտակարգ իրավիճակների նախարարությունները, Արագածոտնի մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, շրջակա

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՊՈՂՈՏԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ЭКОЛОГИЧЕСКИЙ ЦЕНТР ОБЩЕГОСУДАРСТВЕННОЕ ПРЕДПРИЯТИЕ
ENVIRONMENTAL EXPERTISE CENTER
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում: Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից տրվել է արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության թիվ 2392 եզրակացություն:

Վերլուծելով նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության և հանրային քննարկումների արդյունքները, պետք է փաստել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ և գործողությունների ծրագիր: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում, հանքավայրի շահագործման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերի և բնապահպանական պահանջների կատարումը և ապահովել Քարաբերդ համայնքում Ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:

2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

3. Հանքավայրի շահագործման ընթացքում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման համար անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխի պահանջներով:

4. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը /կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը/ և ժամանակացույցերը:

ՀՀ ԵՐԵՎԱՆ «ԷԿՍՊԵՐՏԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
RA YEREVAN "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO
ՀՀ ԵՐԵՎԱՆ «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԿԱՄԱՐ 006» ՍՊԸ ՍՊԸ կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Ակունքի տուֆերի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ / Հ. Մկրտչյան

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒ ԿՈՄԻՏԵ - ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ КОМИТЕТ ПРИРОДНЫХ РЕСУРСОВ РА - ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
RA STATE COMMITTEE OF NATURAL RESOURCES - ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS